

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԻՍԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՐՑԸ

ՄԻՆՁԻՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՅ

ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄՏՔԻ

ԵՎ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԵՋ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ՄԻՆԶԻՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄՏՔԻ ԵՎ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵԶ**

ԴՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3(22)5
Ս 982

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ


Խմբագիր՝ պատմական գիտությունների ղեկավար,
պրոֆեսոր Ս. Ս. ԱՅԵՓԱՆՅԱՆ

Նվիրում եմ ծնողներին հիշատակից

Ստեփանյան Ն. Բ.

Ս 982 Հայկական հարցը մինչևորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ. — Եր.: «Ոսկան Երևանցի», 1997, 272 էջ:

Գրքում լուսարանվում է հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի քիչ առամնասիրված հիմնախնդիրը: Պատմագրության համար հիմնական և օժանդակ աղբյուրների և գրականության համալիր քննությունը գնահատվում են Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության ամենատարբեր ուղղությունների դիրքորոշումները, դրանց պատճառները:



Ս 0503020913
847(01)

ԳՄԴ 63.3(22)5

185994
250292+869

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չեռնամուխ լինելով մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի ուսումնասիրմանը, մեր առջև մի շարք հարակից խնդիրներ ծառայացան, որոնց շրջանցելը մեզ կդժվարացներ պարզ ու հստակ պատկերացնել այն համաձայնություններն ու տարակարծությունները, որոնք առկա էին հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների մերձեցումներում ու գաղափարական տարանջատումներում: Այդ խնդիրներից մեկը Օսմանյան կայսրության էությունն է և աշխարհատարածքում իմպերիալիստական շահեր հետամտող եվրոպական մեծ տերությունների նկատմամբ դիրքորոշումը: Եվ որովհետև ուսումնասիրությունը հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի արծարծման վերելքների ու վայրէջքների քննությունն է, բնույթով՝ բանավիճային, ուստի, մեր շարադրանքի ընթացքին հետևող ընթերցողի հարցասիրությունը բավարարելու նպատակով, անհրաժեշտ ենք գտնում ներածականում, գոնե համառոտ ուրվագծերով, տալ օսմանյան պետականության՝ այդ «հիվանդ մարդու» բնութագիրը, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական այն միջավայրը, որում դատապարտված էր ապրելու նաև արևմրտահայությունը:

Մինչխորհրդային հայ հասարակական մտքի ու պատմագրության որոշ ներկայացուցիչներ, չունենալով պատմագիտական հստակ հայեցակետ և քաղաքական հաստատուն կողմնորոշում, ժամանակի հասարակական-քաղաքական միջավայրի համալիր բնույթը ճանաչելու, ժամանակի հասարակական բարդություններով պայմանավորված դժվարին հարցերին պատասխանելու կարողություն, հաճախ նաև իշխող պետությունների գաղափարական և ուժային պարտադրումների ներքո շեղվել են անկողմնակալ կամ օրբեկտիվ մեթոդաբանությունից:

Ուսումնասիրության մեջ ցույց ենք տվել, որ նման պարագաներում հայ հասարակական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների բազում գնահատականներ ինքնաբերաբար հեռացել են պատմականությունից, գիտականությունից և ձեռք են բերել գաղափարական նախապաշարմամբ պայմանավորված դոգմատիկ շեշտադրություն:

Ջանացել ենք փաստերի համադրմամբ և հակադրմամբ, իրարամերձ տեսակետների քննությանը ցույց տալ, որ հայ ժողովրդի նոր պատմության ոչ մի հիմնահարց թերևս այնքան չի խնճված հակասական, մակերեսային և չըմբռնված տեսակետների արտահայտությամբ և առատությամբ, որքան 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի տեսությունն ու պատմությունը: Բանն այն է, որ տակավին չէր հաղթահարվել կամ ճշգրտվել Հայկական հարցի գնահատման ու լուծման ուղիների որոնման գործում կողմնորոշումների ճիշտ կամ սխալ որակումների վերջնական կողորդիմատները: Եվ դա բնական է: Սուլթանական և ցարական վարչակարգերի պայմաններում գործող հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը չէր կարող գերազանցել իր հնարավորությունները: Այդուհանդերձ, թուրքական և ռուսական պետականության և հասարակական զարգացումների մասին իր հարցադրումներով հայ հասարակական միտքը հասավ ավելի արմատական եզրակացությունների, քան այն կարող էր թույլ տալ նրա պահպանողականությունը և չափավոր լիբերալիզմը: Այստեղից էլ ոչ պատահական այն իրողությունը, որ մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության որոշ ներկայացուցիչներ թուրքական բռնատիրության պատմական տեղի և էության գնահատման հարցերում, շատ անճշան շեղումներով, կանգնած են եղել եվրոպական և ռուսական առաջադեմ մտավորականության մակարդակի վրա:

Ամենից առաջ հիմնավորվել է այն իրողությունը, որ վաչկատուն թուրք ցեղերը իրենց զավթած երկրներին, որոնք որոշակիորեն զարգացած ավատատիրության շրջան էին ապրում, երկու անգամ վերադարձրին սկզբնական, ցածր տնտեսավարման կացությանը: 11-րդ դարում այդ բանն արեցին սելջուկները՝ բյուզանդական ավատատիրությունը վերադարձնելով ռազմասակտական հողատիրության համակարգին, և 16-րդ դարում՝ օսմանցիները, որոնք վերականգնեցին այդ համակարգը սելջուկյան զարգացած ավատատիրության փոխարեն: Ռուս գիտնական Պ. Ա. Չիխաչևը տակավին 1850-ական թվականներին շատ դիպուկ նկատել է, որ Փոքր Ասիայի զավթումը թուրքերի կողմից արավոր անկում բերեց այդ երկրամասին և նրա բնիկ ժողովուրդներին: Նկարագրելով հայերի և մյուս ժողովուրդների ստրկական վիճակը, նա գրել է, որ «Փոքր Ասիան դա մի երկիր է, որ ժողովուրդների գիտության, արվեստի համար մեկ եղել է բնօրրան. մեկ էլ՝ գերեզմանոց»¹: Օտարերկրացիների վկայությամբ, «Թուրքական տիրակալությունը Հայաստանում ճիշտ կլիներ բնորոշել որպես կազմա-

¹ П. А. Чихачев, Письма о Турции, М., 1960, стр. 6.

կերպված ավագակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»²: Օսմանյան Թուրքիայում չկար ոչ մի օրինականություն: Գործող միակ օրենսդրությունը շարիաթն էր, որի հիմքում դրված էին Ղուրանի դոգմաները, որից ելնելով էլ օսմանյան բռնակալները կայսրության հրով ու սրով նվաճված ժողովուրդներին բաժանում էին մուսուլման հավատացյալների և ոչ մուսուլման անհավատների (գյավուրների), ընդ որում գյավուրներին պետք է ոչ միայն անհիծել, այլև գանակոծել և սպանել: Ավելին, Մուհամեդը ավանդում էր, որ բոլոր «անհավատ գյավուրները պետք է խորովվեն կրակի վրա»³: Դա մուսուլմանի սրբազան պարտքն էր և, ըստ Ղուրանի, որքան նա եռանդով կատարեր այն, այնքան արագությամբ և հեշտությամբ տեղ կգրավեր դրախտում: Առաջնորդվելով վերոհիշյալ մարդակերական գաղափարախոսությամբ, թուրքական բռնակալները հենց սկզբից վարում էին բնիկ ոչ մահմեդական ժողովուրդներին բնաջնջելու քաղաքականություն:

Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների համար չկար անձի ու գույքի տարրական ապահովություն, իրողություն, որ չի վրիպել Թուրքիայում պաշտոնավարած օտարերկրացիների ուշադրությունից: Այսպես, էրզրումում անգլիական հյուպատոս Կլիֆորդ Լլոյդը 19-րդ դարի երկրորդ կեսի Թուրքիայի մասին գրում էր, որ «Սուլթանի հայ հպատակները տառացիորեն անպաշտպան են, ինչպես գայլերով շրջապատված ոչ-խարի հոտ»⁴: Դարեր շարունակ մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ գործադրվող հարկային խտրական քաղաքականությունը իր ուժը պահպանում էր նաև 19-րդ դարի երկրորդ կեսին: Այդ խտրականությանը տրվում էր հատուկ նշանակություն և շարիաթի օրենքներում դրանք ընդգծվում էին որպես սկզբունքային դրույթներ:

1639 թվականին Կասրի-Շիրիհի պայմանագրից հետո, Արևմտյան Հայաստանը վարչական նոր բաժանման է ենթարկվում: Նրա տարածքում կազմակերպվում են նախ՝ էրզրումի (Կարին), Կարսի, Վանի և Դիսրբեքիի, իսկ ապա նաև Բիթլիսի, Բայազետի և Խարբեռդի փաշայությունները կամ վիլայեթները: Թուրքիայում ամենամեծ վարչական միավորը վիլայեթն էր (փաշայություն-նահանգը), որի բաժանման հիմքում ընկած էին ոչ թե աշխարհագրական, տնտեսական կամ ազգային հատկանիշները, այլ քաղաքական նկատառումները: Այդ պատճառով էլ վիլայեթների մեծ մասը թե՛

² «Братская помощь пострадавшим в Турции армянам», под. ред. Г. Джанишяна (Джанишев), М., 1897, стр. 13.

³ Турецкий сборник, СПб., 1909, стр. 91.

⁴ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 133.

իրենց տարածքով և թե՛ բնակչության քանակով չափազանց տարբերվել են միմյանցից: Վիլայեթները բաժանվել են սահմակների (գավառ), որոնց գլուխ կանգնում էին փաշաների կողմից նշանակված գայմագամները (գավառապետ): Սանջակները իրենց հեղթին բաժանվում էին կազաների (շըրջան), իսկ կազաները՝ նահիենների (վիճակ), կառավարիչ ունենալով մյուդիրներին: Վիլայեթի սահմաններում կուսակալ փաշայի ձեռքում էր կենտրոնացված վարչական և ռազմական իշխանությունը: Փաշաներն իրենց տրամադրության տակ ունեին անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր՝ տեղում ծագած խռովություններն ու հուզումները ճնշելու համար: Թուրքիայում, որպես կանոն, բոլոր երևելի պաշտոնյաներին նշանակում էր սուլթանը, որը բնավ հաշվի չէր առնում նրանց կառավարման փորձը կամ ընդունակությունները: Վիլայեթների կառավարիչներ էին նշանակվում նրանք, ովքեր այդ տեղի համար ավելի շատ գումար էին վճարում սուլթանին և նրա առջև իրենց մասին բարեխոսողներին: «Եվ այդ պաշտոնյան, — գրում էր Լեոն, — մի անգամ կատարելով իր հավատարիմ հպատակության պարտքը, չէր կարող ապահով լինել, թե երկար կպաշտոնավարեր: Ամեն տարի բայրամի տոնին նա պարտավոր էր վերաճորոգել իր լիազորությունը և եթե շատ էր սակարկություն անում, նրա պաշտոնը անցնում էր մեկ ուրիշին, որն ավելի առատաձեռն էր հանդիսանում»⁵:

Պաշտոնի համար տրվող այդ գումարները փաշաները պարտքով էին վերցնում վաշխառուներից և պաշտոնատեղ էին մեկնում պարտքերի մեջ թաղված՝ անվտանգ իրենց ապագայի նկատմամբ: Թե ինչպիսի հաճախակառության էին իրար հաջորդում փաշաները, երևում է Գարեգին Սըրվանձտյանի բերած Վանի փաշաների ցուցակից, որը ցույց է տալիս, թե ոչ միայն ամեն տարի փոխվել են փաշաները, այլ նույնիսկ եղել են անպիսրները, որոնք հազիվ մի քանի ամիս են պաշտոնավարել⁶:

Փաշաներն իրենց պարտքերը վճարում էին, հարստություն կուտակում և իրենց դիրքին համեմատ ցփ կյանք վարում: Սուլթանական կառավարությունը ոչ միայն չէր արգելում փաշաների և այլ պաշտոնյաների թալանն ու կեղեքումները, այլ հովանավորում և խրախուսում էր դրանք: Սուլթաններն անգամ պատժում էին գավառական այն պաշտոնյաներին, որոնք փորձում էին շեղվել պետական անհրաժեշտություն դարձած, ապականված վարչական համակարգի ընդհանուր պարտադիր ուղղությունից: Այսպես կատարվեց Երուսաղեմի փաշաներից մեկի հետ, որը փորձել էր մի փոքր մեղմ ու հարգանքով վերաբերվել քրիստոնյաների նկատմամբ: Չնայած իր

⁵ Լեոն, Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1946, էջ 55:

⁶ Տե՛ս Գ. Սրվանձտյան, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 349—354:

բազմամյա ծառայության և 75 տարեկան պատկառելի հասակին, հիշյալ փաշան Կ. Պոլիս կանչվեց և գլխատվեց⁷:

Անօրինակացությունը հատկապես քրիստոնյաների նկատմամբ գործադրվում էր անողորմաբար: «Էրզրումում, — գրում էր Լ. Դիլլոնը, — որտեղ կա 8000 տուն մահմեդական, նրանք վճարում են 395 հազար պիաստր (ղուրուշ), մինչդեռ քրիստոնյաները, որոնց տնտեսությունների թիվը կազմում է 2000, մուծում են 430 հազար պիաստր»⁸: Գործելով սուլթանի անունից և հանուն շարիաթի, վաշխառուները, տեղական իշխանությունների ներկայացուցիչները, ավազակաբար և ինքնակամ գովիում, թալանում և քայքայում էին աշխատավոր հայի տնտեսությունը:

Մեծ ու փոքր պաշտոնյաները, որոնք Դ. Վարուժանի արտահայտությամբ «երկյուղից ձուլված բռնակալներ» էին, իրենց ծառայությունը կատարում էին, սակայն ամիսներ, երբեմն տարիներ չստանալով աշխատավարձը, օգտագործում էին պաշտոնական դիրքը ոչ միայն կենսական կարիքները բավարարելու, այլև հարստանալու համար:

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների սոցիալական կեղեքման ամբողջ չարիքը գալիս էր հարկերի գանձման համակարգից, քանի որ բոլոր կարգի հարկահավաքների պաշտոնները վաճառվում էին ամենուրեք: Ամեն տարի Արևմտյան Հայաստանի վիլայեթների կենտրոններում կանգնում էին մարդիկ, որոնք ցանկություն և հնարավորություն ունեին գնելու «վաճառքում» հայտարարված հարկահավաքի (մյուլթեզիմի) պաշտոնը: Գնված պաշտոնի տերը բազմապատիկ այն քանում էր հարկատուներից:

Երբ խոսք էր լինում քրիստոնյա բնակչության, այդ թվում նաև հայերի իրավագրկության մասին, ապա դա չպետք է հասկանալ լոկ այն իմաստով, թե տերության աչքում մի ժողովուրդ արտոնյալ էր, իսկ մյուսը՝ ոչ: Թուրքական պետության օրինակով դա նշանակում էր իշխանության խտրական վերաբերմո՞ւրը դեպի քրիստոնյա և մահմեդական հպատակները: Իրողություն էր, որ դարերի ընթացքում ստեղծվել և 19-րդ դարի երկրորդ կեսին անգամ պահպանվում էր այն յուրահատուկ հասարակական հոգեբանությունը, ըստ որի մահմեդականի աչքում ուղղահավաստի և գլավուրի հարաբերությունն այլ բան չէր, քան ստրկատիրոջ և ստրուկի հարաբերություն: Այդ ստրկական հարաբերությունն իր ցայտուն արտահայտությունն էր գտել նաև այսպես կոչված օթևանի հանկի մեջ:

Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան պաշտոն-

⁷ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1969, էջ 57:

⁸ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 339.

յա կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ունեն իր ուղևորության ընթացքում հանգստանալու կամ սնվելու համար կանգ առնել քրիստոնյաների բնակարաններում, որոնք, ըստ պահանջի, պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձեռքին: Թուրքական կարգերին հատուկ և ուղեկից այս «պարտականությունը» արևմտահայության համար դարձել էր իսկական չարիք: «Հյուր» էին գալիս ոչ միայն պաշտոնական աճյունք, այլև ճանապարհորդելու կամ զվարճանալու դուրս եկած ցեղապետեր, շեյխեր, բեկեր, զինվորական և ուստիկանական աստիճանավորներ: Սակավ չէին դեպքերը, երբ այս կամ այն աստիճանավորը գյուղ էր գալիս մեծ խմբով, օրերով ու շաբաթներով ապրում այդտեղ, ուր սնվելուց զատ նրանք թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում կանանց ու աղջիկներին, գողանում կամ «փեշքեշ» տանում ընտանիքի թանկարժեք իրերը:

Սուլթան Աբդուլ Համիդի բռնապետության ժամանակաշրջանում շարունակում էր հարատևել թուրքական կարգերին բնորոշ օրինազանցություններից ևս մեկը՝ դրամ կորզելու նպատակով ունևոր մարդկանց ձերբակալման պրակտիկան: Նման պարագաներում, որպես փրկագին, պահանջվում էր խոշոր դրամագույն, առանց որի ձերբակալվածի հարազատները չէին կարող ազատել իրենց բարեկամին: Շորթելու այս ձևը կարող էր մեծահարուստին դարձնել աղքատ, իսկ նրան թալանող թուրք ավազակին՝ հարստացնել:

Երվանդ Օտյանը իր հուշերում պատմում է կամայականության մի գործի՝ Սեբաստիայի գյուղերից մեկի նախկին մեծահարուստի մասին, որը «օր մը ձերբակալվեր և տարիներով բանտ մնալե տեքը, կրցեր էր ազատիլ՝ իր ամբողջ հարստությունը մաս առ մաս կերցնելով պաշտոնյաներուն: Գյուղը՝ իր տունը վերադառնալով՝ թափուր գտել էր զայն»⁹: Ամբողջ հարստությունը և հարազատներին կորցնելուց հետո նա հեռանում է գյուղից և Կ. Պոլսում դառնում բեռնակիր: Ավելի ուշ, հայ փախստականների ճամբարներում, որոնք ստեղծվել էին Թուրքիային հարևան երկրներում 1895—1896 թվականների կոտորածներից հետո, նա քահանայի պարտականություններ էր կատարում, աղոթքներում աստծուց թողություն խնդրում նաև իր գործած մեղքերի համար: Աբդուլհամիդյան դարի թուրքական կարգեր...

Օսմանյան բանտը սարսափելի էր, բայց մանավանդ սոսկալի էր այն անմեղ «գյալվորների» համար, որոնց թալանելու նպատակով ենթարկում

⁹ Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 254:

էին տանջանքների, ծաղր ու ծանակի, մինչև դահիճները չէին ստանում իրենց սպասելիքը կամ մինչև տանջահարը փչում էր հոգին:

Տանջանքները, ծեծը հաճախ կազմակերպվում էին քրեական հանցագործների օգնությամբ... Այդ նույն նպատակի համար օգտագործվում էին չարչարանքի գործիչներ, որոնց մեջ տխուր հուշակ էր վայելում հանրահայտ ֆալսիխլան: Ըստ ականատեսների պատմածների, մեղապարտի մերկ ոտքերը դրվում էին հատուկ սարքված երկու պայտերի արանքում, սեղմվում էին, բարձրացվում վերև և սկսում էին թաց ճիպոտներով, կամ նույնիսկ մահակներով հարվածներ հասցնել զոհի ոտքերի կրունկներին ու թաթերին, մինչև ուշագնաց լինելը: Ապա արյունաթաթախ ոտքերն իջեցնում էին աղաջրի մեջ և տանջանքը շարունակվում էր:

«Երբ շատ ուշ, վերջին ժամանակներս, — գրում էր Ռաֆֆին, — կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիչների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացա, թե ինչպես է պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մեջ, բոլորովին ի նկատի չի առել ֆալսիխլան...»¹⁰:

Ժամանակաշրջանի հայ և օտար գրականության մեջ չեն արձանագրվել դեպքեր, երբ կայսրության որևէ հարուստ քրիստոնյա հպատակ դուրս գար բանտից՝ պահպանելով իր բարի անունը և հարստությունը: Դա հնարավոր էր միայն երկու դեպքում. կամ ընդունել մահմեդականություն, կամ դառնալ իշխանությունների գործակալը՝ մատուցելով նրանց հառուկ ծառայություններ:

Թուրքիան ամենաբարբարոսաբար ազգային խտրականության քաղաքականություն էր վարում իր այլադավան հայ հպատակների նկատմամբ: «Հայը թուրքաց Հայաստանում, — գրում էր Գր. Արծրունին, — մարդահաշվում չէ: Նա մարդկային հոգի չէ, նա մի տեսակ առարկա է: Նրան կարելի է և՛ կողոպտել, և՛ անպատվել, և՛ սպանել, և՛ այդ բոլորը ոչ միայն անպատիժ է անցնում, բայց մինչև անգամ հային կողոպտողը, անարգողը, հայի կնոջ ու աղջկան բռնաբարողը... պաշտոնյաների աչքում մի տեսակ գովելի գործ է կատարում»¹¹: Դրա համար էլ «Գավառաց հայերը, — Արծրունուն լրացնում է Լ. Պարոնյանը, — միայն տուրք վճարելու դատապարտված են»¹²:

Ռաֆֆին արևմտահայության համար մեծագույն չարիք էր համարում այն, որ նրա հայրենիքին «տիրում էր մի ազգ, որի աջ ձեռքը յուր սուրն էր, որի ոտքերը յուր նմույզն էր, որի տունը յուր թեթև չաղրը, որի հայ-

¹⁰ Ռաֆֆի, Երկեր, հտ. 4, Երևան, 1956, էջ 254:

¹¹ Գր. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 34:

¹² Լ. Պարոնյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1962, էջ 39:

րենիքը ամեն տեղ, որի հունձը — թշվառ մարդկությունը, որի օրենքը և իրավունքը յուր կամքը, որի կյանքի նպատակը փշրել, խորտակել և ոչնչացնել, որի շարժող ուղին յուր երկաթե սիրտը, վայրենի կատաղությունը և գազանական հանդգնությունը»¹³:

Ծանր հարկերից, կրոնական հալածանքներից ու ֆիզիկական խռտանգումներից զատ, արևմտահայի համար մեծագույն չարիք էր թոռք փաշաների և քուրդ ցեղապետերի (աշիրաթապետեր) միջև մղվող միջավատատիրական կոիվները, որոնք ավերում և ամայացնում էին Արևմտյան Հայաստանը:

«Թուրքերին հարստահարում էին փաղիշահն ու նրա կուսակալները, — գրել է Ի. Գոլոբորոդյո, — բայց թուրքերի անձը, սեփականությունը և կյանքը անձեռնմխելի էին բոլոր կողմնակի ոտնձգություններից... Իսկ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին»¹⁴:

Քրդերն ու չեղքեզները կարող էին հայերի հետ վարվել այնպես, ինչպես իրենք ցանկանում էին և դրա համար որևէ պատասխանատվության ենթակա չէին:

Մինչև 19-րդ դարի 30-ական թվականները Արևմտյան Հայաստանում իշխանությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր քուրդ փաշաների ու աղաների ձեռքում, որոնք կենտրոնական կառավարության նկատմամբ երկու հիմնական պարտականություն ունեին՝ հարկ վճարել և պատերազմի դեպքում իրենց զինված ուժերը տրամադրել սուլթանական բանակին: Այսպես, Տարոնի տերն ու տնօրենը Ալեդին քրդական ավատատիրական տունն էր, որը կիսանկախ քաղաքականություն էր վարում: Քրդական այս ավատատունը առանձին դեպքերում հաջող կոիվներ էր մղում նույնիսկ Էրզրումի թուրքական փաշայության դեմ:

Վիճակն այդպես էր ոչ միայն Տարոնում, այլև մյուս գաղառներում ու շրջաններում: Ունենալով զինված ուժեր, քուրդ աշիրաթապետերը ամենուրեք ինքնուրույնություն և կենտրոնախույզ տրամադրություններ էին դրսևորում Ուրֆայում, Դիարբեքիում, Մարդինում, Մոսուլում և այլուր: Միշտ չէ, որ օսմանյան կառավարությանը հաջողվում էր դրանց զենքի ուժով հնազանդեցնել և հաճախ գործի էր դնում խորամանկությունը, կաշառքը, նրանց միմյանց դեմ գրգռելը: Բարձր Դուռը յուրաքանչյուր նման դեպքում տեղական իշխանություններից պահանջում էր քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ խաղաղ միջոցներով՝ նրանց չտրամադրելով կենտ-

¹³ «Մշակ», 1875, № 19:

¹⁴ И. И. Голобородко, Старая и новая Турция, М., 1908, стр. 41.

րոնի դեմ: Իսկ կենտրոնի համար հայն անհավատ ուսյա էր, նա պարտավոր էր հլու կատարել թուրքի հավատակից եղբոր՝ քրդի բոլոր քմահաճույքները: Աշիրեթապետերից յուրաքանչյուրն ուներ իր գյուղերն ու նույնիսկ շրջանները, ուր նրանք միահեծան տիրակալներ էին: Նրանցից շատերը միաժամանակ կատարում էին աշխարհիկ և հոգևոր առաջնորդի դեր:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին քրդական ցեղապետերը ձեռք բերեցին ընդարձակ հողատարածություններ: Աբդուլ Համիդը թուլ-լատրեց նաև Արևմտյալ՝ Հայաստան վերադառնալ այն ցեղապետերին կամ նրանց ժառանգներին, որոնք արտաքսվել էին նախկին սուլթանների կողմից:

Արևմտահայ գյուղացին քուրդ ավատատիրոջն էր հանձնում իր եկամտի առյուծի բաժինը և իր կյանքը մաշում մի կտոր չոր հացի համար¹⁵:

Արևմտահայության գլխին մի պատուհաս էլ ավելացավ, երբ 1850-ական թվականների վերջերին և 60-ականների սկզբներին, Շամլիի ապստամբության պարտությունից հետո, օսմանյան Թուրքիան խրախուսեց հարյուր հազարավոր չերքեզների* ներգաղթը՝ նպատակ ունենալով ստվարացնել մահմեդական տարրը հատկապես հայաբնակ վիլայեթներում: Գաղթականների սոցիալ-տնտեսական վիճակով թուրքական կառավարությունը երբեք չէր զբաղվում, ընդհակառակը, նա շատ խիստ մտահոգված էր գաղթականների ետդարձը ձախողելու և պարտության ցատումից զազազած այդ ամբոխին զինելու մասին:

Կենսամիջոցներից իսպառ զրկված և ոտից զլուխ զինված մուլեռանդ այդ խուժան զանգվածին կառավարությունը քշում էր հայկական վիլայեթները՝ հատկապես հայաբնակ գյուղերին կից տեղավորելու համար: Դրանով փաստորեն հայ գյուղացիության ուսերին էր ընկնում բազմահազար զինված չերքեզներին կերակրելու պարտականությունը: «Ոչ մի բան չի կարող արդարացնել այն, — կարդում ենք անգլիական հյուպատոսական զեկուցագրերից մեկում, — ինչ որ ձեռնարկեց թուրքական կառավարությունը, լցնելով զինված մարդկանց մի ամբողջ ամբոխ այդ երկիրը, որի ամբողջ բնակչությունը նույնիսկ սովոր չէր գենք կրել»¹⁶:

Ռուսաստանին սահմանամերձ վիլայեթների հայ բնակչության վիճակն առավել քան դժոխային էր: Տրապիզոնի վիլայեթի հայ և հույն բնակչությունը լազական գաղթականների կողոպուտի հետևանքով այնպիսի վիճա-

¹⁵ Լ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Ե., 1984, էջ 102—103:

* Փաստաթղթերում այդ անվան տակ նկատի է առնված Թուրքիա գաղթած բոլոր մահմեդական հյուսիսկովկասյան ցեղերը՝ չեչենները, լազերը, չերքեզները, աջարացիները և մյուսները:

¹⁶ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 60.

կի էր հասել, որ միջոցներ էր որոնում զանգվածաբար Ռուսաստան արտագաղթելու համար: Հենց դա էլ թուրքական կառավարության գերագույն նպատակներից մեկն էր: Նա ձգտում էր, որ հայկական վիլայեթներում կամ հայաշատ մյուս շրջաններում հօգուտ մահմեդական տարրի հայերի տեսակարար կշիռը պակասի այնքան, որ ապագայում էթնիկական մեծամասնության պատճառաբանությամբ տարածքային հարց չառաջադրվի:

Եվրոպական հյուպատոսները և հայ ժամանակակիցները միաբերան հաստատում են, որ բացի զենքից ոչինչ չունեցող չերքեզները մի իսկական պատուհաս էին հայ գյուղացիության համար: Հայկական բնակավայրերը հեղեղած չերքեզների առաջնորդներից ոմանց թուրք պաշտոնյաները նշանակում էին վարչական և ոստիկանական ղեկավարներ, որոնք անպատիժ կողոպտում էին, տերերին քշում իրենց սեփական հողերից, հափշտակում էին բերքը, մինչդեռ հողի տերերը պետք է հողային հարկ վճարեին կառավարությանը և այն հողերի համար, որ իրենք արդեն իսկ օգտագործել չէին կարող: «Ես չգիտեմ, — գրել է Ռոլեն Ժեկմենը, — կարելի՞ է արդյոք մի որևէ այլ այնպիսի երկիր տեսնել, որի կառավարությունը այդպես ճշգտել է իր սեփական պրովինցիաները լցնել վայրի հորդաներով և ինքը նրանց առաջ այսպիսի երկրներուհեղ ղներ՝ կամ ապրիթ թալանով ու կողոպուտով կամ աղքատությունից ոչնչացիր... Թուրքիայի իշխանությունները վարքը ստիպում է մտածել, որ նրանց մեջ միտք է հղացել քայքայել ու ոչնչացնել քրիստոնյա բնակչությունը, չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից»¹⁷:

Նույն բանը շատ ավելի խոշոր չափերով սուլթանական կառավարությունը կատարում էր քուրդ աշիրթապետների միջոցով: Անգլիական «Կապույտ գրքում» գետեղված հյուպատոսական զեկուցագրերից բերելով հայկական վիլայեթների բնակչության անօրինակ կեղեքումների վերաբերյալ բազում փաստեր, Ռոլեն Ժեկմենը եզրակացնում էր. «Միթե՞ կարելի է սրանից հետո զարմանալ, որ Թուրքահայաստանը, որը բնության կողմից օժտված է ամենահարուստ երկրներից մեկը լինել, դարձել է ամենաղժբախտ և աղքատ երկիրը... Բնակչության թափառական տարրը մեծանում է ի հաշիվ նստակյաց ժողովուրդների»¹⁸:

Տարերային աղետները, պետական ու կալվածատիրական դաժան կեղեքումը, բարբարոսական ասպատակությունները սորոհում էին ժողովրդին, զրկում նրան հայրենի երկրի վրա ապրելու հնարավորությունից: Անտանե-լի կացությունը ստիպում էր մարդկանց թողնել հայրենի եզերքը և դիմել

¹⁷ Նույն տեղում, էջ 67—68:

¹⁸ Նույն տեղում, էջ 89:

օտար հորիզոններ, ապրուստի ու գոյության միջոցներ հայթայթելու հեռավոր երկրներում: Ճակատագրի քնահանգությով դարեր շարունակ պանդղխտության դառնությունը ճաշակած արևմտահայությունը ստիպված էր նորից որոնել օտար ճանապարհներ, հնչեցնել տարագրի կարոտի ու տրտմության ծանոթ մեղեդիները:

Արևմտահայության արտագաղթը բնակչության սովորական տեղահանությունն չէր, այլ կատարյալ աղետ, ավեր ու բնաջնջում: Արտագաղթի հետևանքով քայքայվում էին երկրի արտադրողական ուժերը, կաշկանդվում էր հասարակական կյանքի առաջընթացը, թուլանում էր ժողովրդի դիմադրական ճակատը և ավելի դժվարանում նրա ազատագրության գործը: Թուրք կառավարողների հայաջինջ քաղաքականության հետևանքով հատկապես 19-րդ դարի վերջին քառորդում արևմտահայերի թիվը կտրուկ կերպով նվազում էր:

Ա. Համբարյանը ցնցող տվյալներ է հրատարակել այն բարբարոսական ոճիրների մասին, որ կատարում էին թուրք սատրապները Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում: Ըստ նրա տվյալների, արևմտահայերի թիվը 1876 թվականի երեք միլիոնից 20-րդ դարի սկզբին իջավ երկու և կես միլիոնի¹⁰: Արտագաղթում էին Ռուսաստան, Եվրոպական երկրներ, Ամերիկա և նույնիսկ Աֆրիկա: Արտագաղթողների մեծ մասը 16—35 տարեկան երիտասարդությունն էր՝ երկրի հիմնական արտադրող և երպիր շեմսցնող ուժը: Արտագաղթը և պանդխտությունը դառնում են իսկական ազգային ողբերգություն: Ժամանակի հայ մամուլը խորին տագնապով ահազանգում էր այդ ազգային դժբախտության տխուր հետևանքների մասին: Հայ նորադարյան պատմության մեջ ազգային ողբասացության մի ինքնատիպ երևույթ էր Մեքքոն Կյուրճյանի «Պանդոխտի կյանքեն» գիրքը, ուր այնքան մոայլ է գծագրվում տարագիրների կյանքը և տագնապահար ու դառնակսկիծ է հնչում հեղինակի ձայնը. «Աղտոտ կյանքը, զոր ունին այսօր բաղնիքներու և սրճարաններու մեջ վարված կյանքն է: Սուրբ, սիրուն, տակավին ի ծաղկի մատաղ տղաքներ կուգան կը մտնեն այդ սպանդանոցներու մեջ, չրո հացով փորիկ մը կշտացնելու հարկին տակ ճնշված, անբարոյական առևտրո ապրանք կըլլան. կյանքի, արյունի գին է, որ այն՝ հետև դժոխավի՛ն ոճրագործներու քսակը կը պարարտացնեն և... ի՞նչ հույս ազգին... Առնվազն այսօր 100.000 հոգի իրենց տներեն դուրս նետված են. և գիտե՛ք թե որոնք են, գործող, վարող, ցանող ու հնձող ձեռքեր, համեմատաբար առույզըն ու կորովին: Տարին ամեն զեղջեր անելե ետքը, գեթ 50—60.000 անծին

¹⁰ Տե՛ս Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 44:

գավակի կորուստ կա. ասոր վրա ավելացուր օտարության մեջ շարունակված չարաչար գոհերն ալ, հովեն զարնված, ձողերու տակ ջարդված... Դարեր այսպես շարունակված են, այսօր ալ կը շարունակվի այդ աղետքը հիվանդի մը թոքերը կրծող որդերու պես: Պանդխտությունն եթե այսպես շարունակվի, մեր գավառներն անմարդի կընեն այսօր կամ վաղը, այս համոզումն ունեցե՞ք, հավուր ճշմարտություն է»²⁰:

Այսքանից հետո պարզ պետք է լինի Օտմանյան կայսրությունում արևմտահայ գյուղացիության ունեզրկման և ուրբանիզացիայի գործընթացը: Հատկապես ծովափնյա քաղաքներում հայ մշակների մեծ կուտակումներ բացառապես հայկական վիլայեթներից եկածներ էին: Կ. Պոլսի և Տրապիզոնի, ծովափնյա այլ քաղաքների նավահանգիստներում աշխատող հայ մշակների թիվը տասնյակ հազարների էր հասնում: Մեծ երգիծաբան Լ. Պարոնյանը իր «Մեծապատիվ մուրացկաններում» փայլուն պատկերել է այդ մարդկանց, երբ նրանք իրար ձեռքից խլում են Աբիսողոմ աղայի իրերը՝ ծաղկի փողոց թիվ 2 փոխադրելու համար: Այդ գավեշտական փոքրիկ պատկերում արտահայտություն է գտել մայր հողից «կամավոր» վտարված արևմտահայ պանդուխտ գյուղացու մեծ ողբերգությունը:

Պակաս սրտակեղեք չէ պանդուխտի կյանքի մեկ այլ քաջատեղյակի՝ Ծերոնցի նկարագրությունը: «Ով որ մշեցու հային թշվառ վիճակը կուզես տեսնել, — գրել է նա, — թող երթա ոչ թե Մուշ, այլ հոս, Պոլիս. Գասըմ փաշայի խան անվանյալ որջերը և տեսնել մշեցի ընտանիք՝ այր, կին, տղա, գրեթե մեռկ, հոգնաբեկ, անխոս, անկարասի, հարածամ իր խորին աշխատության և անոթության, օդի խստության դեմ: Ով որ հայուն թշվառ վիճակը կուզես տեսնել՝ թող երթա Վանանդ, Ախուրյան գետի ափանց մոտ, տեսնիր մշեցին դառնադեմ, տղու ձեռքե մը բռնած, հալած կին մը՝ գրկի տղեկով մի հստկով, գյուղե գյուղ թափառական, հարմար առիթ մը դիտելով, ուր կարենա զինք գետին ձգել»²¹:

Երկրի տնտեսական կյանքի անկմանը և ժողովրդի ազգային ծանր կացության ուղեկից էր նրա մտավոր անկումը: Մի երկիր, ուր քրիստոնյայի գլխին սուրն էր շողում, ուր այլադավանը ապահով չէր վաղվա համար և ամենքը տարված էին իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու գերագույն հոգսով, բնական է, որ հոգևոր կյանքն էլ ամլության դատապարտվեր: Թուրքիայում հայ ժողովուրդը զրկված էր մշակութային իր հարուստ ժառանգությունը պահպանելու և զարգացնելու տարրական հնարավորություններից: Ճարտարապետական կոթողների կիսաքանդ ու ավեր-

²⁰ Մ. Կյուրճյան, Ամբողջական երկեր, Փարիզ, 1931, էջ 120—121:

²¹ «Արևելյան մամուլ», 1876, № 3, էջ 23: Տե՛ս նաև Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 1, Փարիզ, 1934, էջ 66:

ված մնացորդների վրա թագավորող ստրկության խուլ լուսությունը լցնում էր ճանապարհորդների հոգին տխուր խորհրդածություններով: Թուրք կառավարողները ծծում էին իրենց հայ հպատակների բոլոր կենսական հյութերը, պղծում, ավերում ու ոչնչացնում էին իրենց համար ատելի հայ ժողովրդի մշակութային արժեքները, նրանց դարավոր հուշարձանները: Հայ ժողովրդի մշակութային ոգորումն ընթանում էր ծանր ու մեկուսացված պայմաններում:

Եթե թուրքական կայսրության հպատակ մի շարք ժողովուրդներ արդեն ազատագրվել և կենսակերպի եվրոպական ուղիներ էին մտնում, ապա արևմտահայ ժողովուրդը ճիգեր էր կատարում իր գոյության իրավունքը դուրս Կոնստանդուպոլսի քարքարոսության կապանքներից:

Եթե արևմտահայությունը կարողանար իր սեփական ուժերով ազատագրվել, թուրքական բռնատիրությունից և ստեղծեր իր ինքնակառավարման պետական համակարգը, անշուշտ, դա կլիներ արևմտահայության ազգային ազատագրության հարցի լուծման իդեալական միջոցը: Սակայն պատմական իրադրությունը դասակիրվել էր այնպես, որ նա չէր կարող իր սեփական ուժերով հասնել հաղթանակի:

Իսկ ո՞րն էր այն ուժը, որ կարողանար իրական օգնության ձեռք մեկնել արևմտահայությանը:

Մինչև ուսական կողմնորոշման երևան գալը հայ ժողովրդի մոտ իշխում էր այն մտայնությունը, թե հայերն իրենց ստրկական կացությունից դուրս կգան կաթոլիկ եվրոպայի միջոցով: Ամբողջ միջնադարյան Հայաստանի ազատագրական գաղափարախոսության պատմությունը մինչև 18-րդ դարի սկիզբը կրում էր պատրանքաշատ այդ մտայնության կնիքը: Դր հայերի ուսական կողմնորոշումը գործնական ու բանուկ ուղիների վրա դրվեց հենց այդ հարյուրամյակի նախաշեմին՝ որոշակի արտահայտություն է գտել նաև մինչխորհրդային հայ պատմագրության էջերում: «Հայերը Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ժՐ դարից առաջ, բայց այդ հարաբերությունները միմիայն առևտրական էին: Ամենից առաջ Պետրոս Մեծը ուշադրություն դարձրեց հայերի վրա. նա հասկացավ, որ հայոց ազգի ձեռքով կարելի է ուսաց իշխանությունը Անդրկովկասում հաստատել»²²: Հայ ազատագրական շարժման գործիչներն այն համոզմունքն ունեին արդեն, որ միայն Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ տնտեսապես և քաղաքականապես բզկտված հայ ժողովուրդը կարող է թոթափել Արևելքի մահմեդական բռնապետությունների լուծը:

²² Ալ. Երիցյան, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877—1878, № 2, էջ 390:

Հարկավ, ավատատիրական-ճորտատիրական հարաբերություններ էին իշխում նաև Ռուսաստանում, բայց ի տարբերություն Թուրքիայի և Պարսկաստանի, այստեղ ավատատիրության ընդերքում զարգանում էին նոր արտադրողական ուժեր, որոնք նախապայման պիտի դառնային նոր, առաջավոր արտադրահարաբերությունների առաջացման ու զարգացման համար: Արդեն այդ պահին Ռուսաստանն իր մշակույթի, բարեկրթության զարգացման մակարդակներով անհամեմատ բարձր էր Արևելքի մահմեդական աշխարհից: Նա պատռել էր միջնադարյան սահմանափակության վարագույրը և անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում ոռոակական ազգային մշակույթի և գիտության զարգացման համար: Ռուսական պետությունն ապրում էր իր ամրակարման և զարգացման այն շրջանը, երբ զնալով ավելի էր հզորանում կայսրությունը՝ իր հաստատ ու կայուն օրենքներով: Իր ռազմական հզորությամբ ևս նա ձեռք էր բերել միջազգային լայն ճանաչում:

Ռուսական զենքի աջակցության հետ կապելով հայ ժողովրդի ազատագրության գործը, հայ ազատագրական շարժման գործիչները ելնում էին նաև Հայաստանի՝ Ռուսաստանին մոտիկ լինելու իրողությունից: Նրանք գտնում էին, որ այդ հանգամանքն ավելի դյուրին պիտի դարձներ երկու քրիստոնյա ժողովուրդների տնտեսական, մշակութային և ռազմական բազմակողմանի շփումների զարգացումը:

Ահա սրանք էին այն պատճառները, որի հետևանքով արևելյան բռնատիրության դեմ իր ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի գործիչները հանձին Ռուսաստանի տեսան այն իրական ուժը, որի ռազմական գործուն աջակցությամբ ժողովուրդը պիտի թոթափեր արևելյան բռնատիրությունների դարավոր լուծը:

Սակայն ավելի քան մեկ հարյուրամյակ Ռուսաստանի համար ստեղծված միջազգային անբարենպաստ հանգամանքների շնորհիվ, նա չկարողացավ իրականացնել դեպի հարավ առաջխաղացման իր նկրտումները, հետևաբար և անկատար էին մնում հայ գործիչների փայլալայծ ակնկալությունները:

19-րդ դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական չորս պատերազմները նույնպես լիովին չկատարեցին հայ ժողովրդի բաղձանքները: Եթե ռուս-պարսկական վերջին պատերազմի արդյունքներն ամփոփող Թուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ր պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին և արևելահայ ժողովրդի համար ստեղծվեցին ապրելու ու զարգանալու անհամեմատ

նպաստավոր պայմաններ, ապա 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատե-
րազմը չտվեց ցանկալի արդյունքը:

Ադրիանապոլսի 1829 թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրով, արևմտյան տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, որոնց ձեռնտու չէր Ռուսաստանի ուժեղացումն Արևելքում, ի վնաս հայ ժողովրդի ազգա-
լին շահերի, Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Արդահանը, Բայա-
զետը, Ալաշկերտը, Կարսի և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները,
որոնք պատերազմի ընթացքում գրավվել էին ռուսական բանակի Կովկաս-
յան կորպուսի կողմից: Այսպիսով, տակավին Ադրիանապոլսի հաշտու-
թյան պայմանագիրը ցույց տվեց, որ արևմտահայության հարցը սոսկ հայ-
թուրքական, նույնիսկ հայ-ռուս-թուրքական հարաբերությունների հարց
չէր: Նա սերտորեն առնչվում էր ռուս-թուրք և արևմտյան տերություննե-
րի հարաբերություններին, Մերձավոր Արևելքում նրանց գաղութատիրա-
կան, նվաճողական ծրագրերին: Ուստի այդ ժամանակներից ի վեր, հա-
ճուն իրենց շահերի, մեծ տերությունները պաշտպանել են Թուրքիային
ընդդեմ Ռուսաստանի և Արևմտյան Հայաստանի ճակատագիրը դրել ար-
յունոտ զոհասեղանին:

Ընդհանրապես Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհատարածքում
եվրոպական մեծ տերությունների շահադիտական քաղաքականության
ակունքները բավական խորն էին: Օսմանյան կայսրության հետ եվրոպա-
կան տերությունների և Ռուսաստանի հարաբերությունները, թուրքական
բռնատիրության դեմ հատկապես քրիստոնյա հպատակ ժողովուրդների
ազատագրական պայքարի օգտագործումով՝ այդ կայսրության հաշվին
ռազմավարական և տնտեսական առավելությունների հասնելու համար,
նրանց մրցապայքարը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է
Արևելյան հարց անունով: Այդ տերմինի օգտագործումը առաջին անգամ
հանդիպում ենք Սրբազան դաշինքի 1822 թվականի Վերոնայի կոնգրե-
սում օսմանյան տիրապետության դեմ հույն ժողովրդի ազգային-ազատա-
գրական շարժման բռնկման, Բալկաններում ստեղծված իրավիճակը քննե-
լու ժամանակ, երբ եվրոպական դիվանագիտությունը քրիստոնյաներին
փրկելու կարգախոսով կառչեց այդ հարցից, որպես մի միջոցի, փլուզում
թևակոխած Օսմանյան կայսրությունում արտոնյալ դիրքեր նվաճելու, նրա
տրոհումից օգուտ շահելու համար: Արևելյան հարցի դիվանագիտական
պատմության առաջին շրջանը ընդգրկում է մինչև 1853—1856 թթ. Արևել-
յան (Ղրիմի) պատերազմի սկիզբը կամ ավարտը: Այս ժամանակաշրջա-
նում թուրքական ժառանգությանը տիրանալու մրցապայքարում գործում
մասնակցություն ունեին Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան:
1831—1833, այնուհետև 1839—1840 թվականներին Եգիպտոսի կառա-

վարիչ Մուհամեդ Ալիի հակաթուրքական ապստամբական շարժումների ժամանակ, երբ վերջինս սպառնում էր գրավել Կ. Պոլիսը և վերջ դնել սուլթանի իշխանությանը, ասպարեզ ելան մեծ տերությունները: Ռուսական նավերը Բոսֆոր մտան՝ փրկելու սուլթանի գահը, 14 հազար ռուսական զինվորներ ափ իջան Ունքյար-Բաքելեսիում և փակեցին Եգիպտական բանակի ճանապարհը դեպի Կ. Պոլիս: Ռուս-թուրքական մերձեցումից անհանգստացած Անգլիան և Ֆրանսիան նպաստեցին Եգիպտոսի և Թուրքիայի հաշտեցմանը: Թուրքիայից ռուսական ուժերի դուրս բերման նախօրյակին կնքվեց Ունքյար-Բաքելեսիի պայմանագիրը, համաձայն որի Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում Թուրքիային ցուցաբերել ռազմական օգնություն: Պետերբուրգը նաև կապիտուլյացիոն արտոնություններ էր ստանում: Պայմանագրի չաղտնի հողվածի համաձայն Թուրքիան պարտավորվում էր պատերազմի դեպքում Ռուսաստանի պահանջով փակել Դարդանելի նեղուցը բոլոր օտարերկրյա նավերի համար: Սա Արևելյան հարցում Ռուսաստանի հաջողության բարձրակետն էր: Վերոհիշյալ պայմանագիրն առաջ բերեց արևմտաեվրոպական տերությունների հետ Ռուսաստանի հարաբերությունների սրման: 1840—1841 թվականներին Անգլիան Լոնդոնում գումարված տերությունների խորհրդածրոյում ընդունված կոնվենցիաներում ի չիջ դարձրեց Ռուսաստանի կարճատև վերընթացը: Ռուսաստանը համաձայնեց չնորոգել պայմանագիրը և զրկվեց միակողմանի արտոնություններից: Այստեղ է, որ անգլիական դիվանագիտությունը մեջտեղ բերեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը հարգելու խնդիրը՝ status quo-ն, որը պահպանելու պատրվակով տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական գործառնություններում ամենաշատ կրկնվող արտահայտությունը՝ իր մեջ մարմնավորելով ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարն արգելակողի դերը: Բնութագրական է գերմանացի միջազգայնագետ գիտնական Ֆր. Էնգելսի այն դիպուկ խոսքը, թե ստատուս քվոյի քաղաքականությունը սուլթանական իշխանության կողմից Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացումն է²⁸:

Այդպես եղավ նաև Ղրիմի պատերազմի արդյունքների դիվանագիտական ամփոփագրով՝ 1856 թ. մարտի 18-ի Փարիզի տրակտատով, որի համաձայն Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում Արևմտյան Հայաստանում գրաված բոլոր տարածքները (այդ թվում և Կարսը): Ղրիմի պատերազմը և Փարիզի հաշտության պայմանագիրը փոխեցին միջազգային իրադրությունը Եվրոպայում: Սրբազան դաշինքը փաստորեն դադարեց

²⁸ Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, Сочинения (изд. 2-ое), М., 1961, стр. 31.

գոյություն ունենալուց, Ռուսաստանի դիրքերը թուլացան, առավել սրվեց Արևելյան հարցը: Չնայած 1870—1871 թթ. միջազգային իրադրության բարենպաստ պայմաններում Ռուսաստանը վերականգնեց իր իրավունքները Սև ծովում, բայց, միևնույն է, Թուրքիայում թելադրողները եվրոպական տերություններն էին:

Ղրիմի պատերազմը Օսմանյան կայսրությունից պահանջեց հսկայական ֆինանսական միջոցներ, որ նա չէր կարող ձեռք բերել երկրի ներսում: Գյուղացիությունից միանվագ երկու տարվա հարկերի գանձումը մի պալիատիվ (կիսամիջոց) էր, որը ոչ մի չափով չէր կարող շտկել Թուրքիայի ֆինանսները: Միակ ելքը արտաքին փոխառություններն էին: Թուրքիայի դաշնակից Ֆրանսիան և Անգլիան ամենայն պատրաստակամությամբ նրան օժանդակել էին արտաքին փոխառություն ստանալու, որով, մի կողմից, նպաստել էին Ռուսաստանին համատեղ ուժերով պարտության մատնելու, մյուս կողմից՝ շատ նպաստավոր կերպով ապահովում էին իրենց երկրների կապիտալների շահավետ շրջանառությունը:

Ընդամենը երկու տասնամյակում (1854—1874 թթ.) Թուրքիան կրճառում է 4.297 միլիոն ֆրանկի 13 փոխառություն, ընդ որում, երբ հաշվառվեց այն տոկոսն այն ժամանակ եվրոպայում կազմում էր 3,88—4,77 տոկոս, Թուրքիան իր դաշնակից պարտքատերերին վճարում էր 7—13 տոկոս: Որքան մեծանում էր կայսրության պարտքը, այնքան Թուրքիան ստրկական կախվածության մեջ էր ընկնում Արևմուտքից: Փոխառությունների տոկոսների գումարը տարեցտարի մեծանում էր այնքան, որ պետական բյուջեի մուտքային մասի չորս հինգերորդը գնում էր այդ պարտավորությունները ծածկելուն:

19-րդ դարի կեսերից ֆրանսիական կապիտալի հետ ուժեղ մրցակցության մեջ մտած անգլիական կապիտալը շատ ավելի գիշատիչ ծրագրեր ուներ: Բոլոր այն երկրները, ուր մտնում են անգլիական կապիտալները, պետք է դառնան Մեծ Բրիտանիայի համար որպես միայն հումք, կցորդներ՝ այսպես էր ձևակերպել իր երկրի գաղութատիրական ծրագիրը ժամանակի անգլիական բուրժուական տնտեսագետ Ջ. Զերրին «Քաղաքական-տնտեսական նամակներ ԱՄՆ-ի պրեզիդենտին» իր գրքում²⁴:

Եվրոպական, հատկապես անգլիական կապիտալի ներխուժման հարվածների տակ Թուրքիայի տեղական արդյունագործությունը և առևտուրը թևակոխում է անկման մի նոր շրջան: Տերությունների հաստատած վաղեմի կապիտուլյացիաներին զուգընթաց, կապիտալի ներխուժումը պատճառ է դառնում երկրի նյութական դեգրադացիային և գաղութային ստոր-

²⁴ Տե՛ս Գ. Կորրի, Политико-экономические письма к президенту Американских Соединенных Штатов, М., 1860, стр. 184.